# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 2012 թվականի ընթացքում ապահովել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 8-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող անշարժ գույքի կադաստրի զարգացման 2012 թվականի համալիր ծրագիրը հաստատելու մասին» N 53-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացումն ամբողջությամբ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված 330.0 մլն դրամի չափով ֆինանսական միջոցների հաշվին կադաստրի համակարգի կողմից իրականացվել են 10 ծրագրային աշխատանքներ, այդ թվում.

1. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման և կադաստրային քարտեզագրման աշխատանքներ**

Ծրագրի շրջանակներում իրականացվել են բնակավայրերի 1 :2000 մասշտաբի տեղագրական հանութագրման աշխատանքներ 995 հեկտարի վրա, կադաստրային քարտեզագրման աշխատանքներ 5504 անշարժ գույքի միավորի և խտացման ցանցի 70 կետերի տեղադրման, չափման և հավասարակշռման աշխատանքներ Հադրութի շրջանում:

2. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներ**

Հաշվառման աշխատանքներ են իրականացվել 33, իսկ գրանցման աշխատանքներ՝ 2 համայնքներում:

3. **Հողի և դրա վրա գտնվող շենքերի և շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացման աշխատանքներ**, որոնց արդյունքում կատարվել է անշարժ գույքի շուկայի 2011-2012թթ. եռամսյակային, կիսամյակային և տարեկան վերլուծություն: Ծրագրի շրջանակներում իրականացվել են անշարժ գույքի միասնական գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում և վերլուծություն, որոնց արդյունքները պարբերաբար հրապարակվել են «Ազատ Արցախ» հանրապետական թերթում՝ հասա-րակության լայն շերտերին շուկայի իրավիճակի մասին իրազեկելու նպատակով:

4. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների և համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքներ**

Իրականացվել են Հադրութի շրջանի 30 համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքներ:

5. **Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների և մասնավորեցվող /սեփականաշնորհվող/ անշարժ գույքի և ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքներ**

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հայտերի հիման վրա իրավունքի պետական գրանցում է իրականացվել 889 միավոր պետական սեփականության և 64 միավոր համայնքային սեփականության նկատմամբ:

6. **Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ**

Իրականացվել են 263 միավորի նկատմամբ հաշվառման և 552 միավորի նկատմամբ գրանցման աշխատանքներ:

7. **Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի ստեղծում**

Տեղեկատվական բանկի ստեղծման նպատակով իրականացվել են 4804 կադաստրային գործերի տվյալների մուտքագրում և 229324 էջերի տեսաներածում:

8. **Հողեր հաշվառման և հողային հաշվետվությունների կազման աշխատանքներ**

Իրականացվել են ԼՂՀ Ասկերանի և Մարտունու 20 համայնքներում:

9. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանապարհային ցանցի քարտեզագրման աշխատանքներ**

Քարտեզագրվել է 200 կմ և ներդրվել է հատուկ թվայանացման նավիգացիոն համակարգ 2700 կմ ճանապարհային ցանցի համար:

10. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսեր**

2012 թվականի արդյունքներով ընդհանուր առմամբ տարածքային ստորաբաժանումների ընթացիկ գործունեության տվյալներով կատարվել են 8969 միավոր պետական գրանցման աշխատանքներ և տրամադրվել է 7426 միավոր անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն:

Վերոհիշյալ աշխատանքների դիմաց սահմանված կարգով գանձվել և պետական բյուջե է մուտքագրվել 39597,9 հազ.դրամ պետական տուրք, իսկ աշխատանքների արդյունքներով ապահովվել է 211447,3 հազ. դրամ եկամուտ:

2012 թվականի անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը կազմել են 434,6 հազ.դրամ, որն էլ փոխանցվել է պետական բյուջե:

Միաժամանակ համակարգի կողմից իրականացվել են նաև մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են մեր հանրապետությունում կադաստրի ոլորտի զարգացմանը: Դրանք են՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կադաստրային քարտեզագրումն ավարտված համայնքներում (բացի՝ Ստեփանակերտ քաղաքից) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման ժամանակ, իրավունք հաստատող փաստաթղթերում նշված չափի 20 **տոկոսից ավելի հողամաս օգտագործելու պատճառով իրավունքի պետական գրանցում չստացած բնակելի տների և դրանց կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասերի** պետական գրանցման աշխատանքները: Տարվա կտրվածքով առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ժամանակ դուրս մնացած 46 անշարժ գույքի միավորների նկատմամբ կատարվել են իրավունքի պետական գրանցում, որի արդյունքում գյուղական համայնքների բնակիչներին անվճար կտրամադրվեն սեփականության իրավունքի գրանցման վկայականներ.

Շարունակվել են աշխատանքները **հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում**: Գեոդեզիայի և

հողային պետական տեսչության կողմից 2012 թվականին տեսչական ստուգումներ են իրականացվել ԼՂՀ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Շուշիի, Շահումյանի, Քաշաթաղի շրջաններում և Ստեփանակերտում: Տեսչության կողմից արձանագրվել են ԼՂՀ հողային օրենսգրքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտումներ, որոնք վերացնելու համար տրվել են համապատասխան ցուցումներ:

Ընդհանուր առմամբ պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվել են 6982,367 հա վարձակալության տրամադրված գյուղնշանակության հողերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքներ, որից Ասկերանի շրջանում՝ 1686,2 հա, Մարտունու շրջանում՝ 1897,88 հա, Մարտակերտի շրջանում՝ 253,45 հա, Հադրութի շրջանում՝ 839,7 հա, Շուշիի շրջանում՝ 445,65 հա, Շահումյանի շրջանում՝ 2,48 հա, Քաշաթաղի շրջանում՝ 1857,0 հա:

2012 թվականին շարունակվել են շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման աշխատանքները: Ընդհանուր առմամբ գրանցվել են 28 միավոր շարժական գույքի նկատմամբ գրավի իրավունքը:

## ***<u>Օրենսդրություն</u>***

2012 թվականին Կոմիտեի կողմից մշակվել և ԼՂՀ Ազգային ժողովի և կառավարության քննարկման են ներկայացվել ներքոհիշյալ նորմատիվ իրավական ակտերը՝

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի մայիսի 30-ին ՀՕ-16-Ն)
2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի նոյեմբերի 29-ի ՀՕ-24-Ն)
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կանոնադրությունը հաստատելու մասին (Ընդունված է 2012 թվականի փոտրվարի 8-ի N 54-Ն)
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման անցկացման կարգն ու պայմանները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի ձևը սահմանելու մասին (Ընդունված է 2012 թվականի փետրվարի 23-ի N 72-Ն)
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շարժական գույքի կադաստրի և շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010թվականի հոկտեմբերի 26-ի N 678 -նորոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի մարտի 28-ի N 175-Ն)
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառման ենթակա ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմների,երկաթուղային տրանսպորտային միջոցների ու ջրային տրանսպորտային միջոցների ցանկերի,հաշվառման կարգերը,և

հաշվառման մատյանների ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 699 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի մարտի 28-ի N 176-Ն)

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառման ենթակա հաստոցների,սարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի հաշվառման կարգը, հայտի (դիմումի) և հաշվառման մատյանի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 15-ի N 298-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի մարտի 28-ի N 177-Ն)

8. Ծարժական գույքի հաշվառման լիազոր մարմիններ ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 31-ի N 356 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի մարտի 28-ի N 178-Ն)

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 63 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի ապրիլի 27-ի N 262-Ն)

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 15-ի N118 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի ապրիլի 27-ի N 263-Ն)

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսին 19-ի N172 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի մայիսի 16-ի N 307-Ն)

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 8-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի մայիսի 24-ի N 325 - Ա)

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 29-ի N 82 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 19-ի N 410-Ն)

14. Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղ Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 29-ի N 444 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 19-ի N 419-Ն)

15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 404 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 19-ի N 420-Ն)

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 21 N 23 և 2006 թվականի հունիսի 27-ի N 345 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 19-ի N 421-Ն)

17. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի N 61 որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 19-ի N 422-Ն)

18. Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 19-ի N 423-Ն)

19. Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման,տեղեկատվության տրամադրման և այլ ծառայությունների համար գանձվող վճարների չափերը սահմանելու մասին (Ընդունված է 2012 թվականի հունիսի 21-ի N 433-Ն)

20. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 101 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի հուլիսի 10-ի N 478-Ն)

21. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 101 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (Ընդունված է 2012 թվականի հոկտեմբերի 9-ի N 701-Ն)

22. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման 2012 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին (Ընդունված է 2012 թվականի հոկտեմբերի 9-ի N 702-Ն)

Հաշվետու տարվա ընթացքում մշակվել են նաև ԼՂՀ համայնքների հողերի կատեգորիաներ փոխելու մասին 66 ԼՂՀ կառավարության որոշումների նախագծեր, որոնք սահմանված կարգով ընդունվել են ԼՂՀ կառավարության համապատասխան որոշումներով:

2012 թվականին Կոմիտեի կողմից մշակվել և ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից գրանցվել են հետևյալ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը՝

1. Անշարժ գույքի չափագրման (հաշվառման) իրահանգը հաստատելու մասին ( 30.03.2012 թ. N 87-Ն)

2. Հողամասի, շինությունների հատակագծերի օրինակելի ձևերը և այդ հատակագծերին ներկայացվող պարտադիր պահանջները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2007 թվականի մարտի 26-ի թիվ 22-Կ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին (03.04.2012թ. N 94-Ն)

3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանի ձևը և դրանում տեղեկությունների լրացման առանձնահատկությունները հաստատելու մասին (23.05.2012թ. N 143-Ն)

4. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանից և կադաստրային գործից անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածքի (միասնական տեղեկանքի) ձևը հաստատելու մասին (23.05.2012թ. N 144-Ն)

5. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի ձևը և դրանում տվյալների լրացման առանձնահատկությունները սահմանելու մասին (23.05.2012թ. N 145-Ն)

6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման դիմումների հաշվառման մատյանների ձևերը և վարման կարգերը, դիմողին տրամադրվող (փաստաթղթերի ընդունման վերաբերյալ) ստացականի ձևաթուղթը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 17-Կ/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին (23.05.2012թ. N 146-Ն)

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2011 թվականի հունվարի 13-ի N 02-Կ/Ն և 2011 թվականի հունվարի 21-ի N 10-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին (28.07.3012թ.N 211-Ն)

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2003 թվականի մայիսի 12-ի N 96-Կ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին (28.07.3012թ. N 212-Ն)

## ***Կադրերի պատրաստում և վերապատրաստում***

Կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների անձնական գործերը համապատասխանեցվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004թ. ապրիլի 26-ի «Քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը հաստատելու մասին» թիվ 11 որոշման

պահանջներին: Կազմակերպվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների 8 մրցույթ և քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող 4 մասնագետների ատեստավորում: Կազմակերպվել է կոմիտեի աշխատակազմի գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 9 քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստում: Ապահովվել է կոմիտեի համակարգի բոլոր հայտարարատուների գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացումը:

Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնները լրացնելու համար կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

### ***Համագործակցություն***

2012 թվականին շարունակվել է ՀՀ և ԼՂՀ կադաստրի պետական կոմիտեների միջև համագործակցությունը: Համագործակցության հուշագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև ՀՀ կադաստրի համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքը քննարկելու նպատակով 2012 թվականի ընթացքում կազմակերպվել են փոխադարձ այցեր: ՀՀ կադաստրի պետական կոմիտեի մասնագետների կողմից կոմիտեի աշխատակազմի Տեղեկատվական կենտրոնում ներդրվել է անշարժ գույքի վերաբերյալ տվյալների որոնման նոր ծրագիրը, իսկ աշխատակազմի հաշվառման բաժնում՝ հանրապետության հողային հաշվեկշիռ վարելու ծրագիրը:

### ***Պետական մարմինների հետ համագործակցություն***

ԼՂՀ զբոսաշրջության վարչության հետ պայմանավորվածության համաձայն 2012 թվականին շարունակվել է ԼՂՀ տարածքում գտնվող պատմամշակութային օբյեկտների գրանցման գործընթացը:

Հաշվի առնելով, որ հողօգտագործման բնագավառում ամենամեծ առնչությունը համայնքների հետ է, պետական կոմիտեի մասնագետների կողմից պարբերաբար մեթոդական օգնություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին և համապատասխան մասնագետներին:

### ***Հասարակության հետ կապեր***

2012 թվականին կայացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նոր պաշտոնական կայքի բացումը, որի նպատակն է հասարակության լայն շերտերին ծանոթացնել կադաստրի համակարգի կողմից իրականացվող գործառույթներին և իրավական ակտերին:

Զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար ներկայացվել է համակարգի գործունեությունը, լուսաբանվել են պետական կոմիտեի պատասխանատուների ելույթները:

2012 թվականի ընթացքում ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե մուտքագրվել է 1000 գրություն՝ տարաբնույթ բովանդակությամբ, որոնք քննարկվել և ընթացքավորվել են ԼՂՀ օրենսդրության սահմաններում: